ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդի 2023 թ.-ի **առաջին** նիստը տեղի է ունեցել 12.01.2023 թ.-ին: Խորհրդի 29 անդամից նիստին մասնակցել է 20-ը, ևս՝ 7 հրավիրյալ անձ:

Նիստի օրակարգ՝

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի ողջույնի խոսք
2. «Հայաստանի Հանրապետության մշակույթի պահպանության և զարգացման 2023-2027 թթ. ռազմավարության» նախագծի և գործողությունների պլանի ներկայացում /զեկուցողներ՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալներ Արա Խզմալյան և Ալֆրեդ Քոչարյան/
3. «Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտների 2023-2030 թթ. զարգացման ռազմավարության» նախագծի և գործողությունների պլանի ներկայացում /զեկուցող՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյան/
4. Հարց ու պատասխան
5. Ելույթներ /մինչև 3 րոպե/

Նիստի ընթացքում ընդունվել է որոշում.

1. Ընդունել ի գիտություն զեկույցները:
2. Հավանության արժանացրել «ՀՀ մշակույթի պահպանության և զարգացման 2023-2027 թթ. ռազմավարության» և «ՀՀ-ում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտների 2023-2030 թթ. զարգացման ռազմավարության» նախագծերը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդի 2023 թ.-ի **երկրորդ** նիստը տեղի է ունեցել 17.02.2023 թ.-ին: Խորհրդի 29 անդամից նիստին մասնակցել է 16-ը, ևս՝ 6 հրավիրյալ անձ:

Նիստի օրակարգ՝

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի ողջույնի խոսք

2. ««ՀՀ կրթության՝ մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը» հաստատելու մասին» օրենքից բխող գործողությունների ծրագրի նախագծի ներկայացում /զեկուցողներ՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալներ Արթուր Մարտիրոսյան և Արաքսիա Սվաջյան, Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետ Լուսինե Գրիգորյան/
3. Հարց ու պատասխան
4. Ելույթներ /մինչև 3 րոպե/

ՀՀ ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդի 2023 թ.-ի **երրորդ** նիստը տեղի է ունեցել 23.06.2023 թ.-ին: Խորհրդի 29 անդամից նիստին մասնակցել է 14-ը, ևս՝ 5 հրավիրյալ անձ:

Նիստի օրակարգ՝

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի ողջույնի խոսք
2. «Մշակույթի զարգացման» հիմնադրամի ստեղծման նախագծի ներկայացում /զեկուցող՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյան/
3. «ՀՀ բուհերում առկա ուսուցմամբ սովորողներին տրվող պետական կրթաթոշակների չափերը սահմանելու, պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող մասնագիտությունների (կրթական ծրագրերի) ցանկը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագծի ներկայացում /զեկուցող՝ ԿԳՄՍՆ բարձրագույն և հետբուհական կրթության վարչության պետ Լուսինե Գրիգորյան/
4. Հարց ու պատասխան
5. Ելույթներ /մինչև 3 րոպե/

ՀՀ ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդի 2023 թ.-ի **չորրորդ** նիստը տեղի է ունեցել 25.09.2023 թ.-ին: Խորհրդի 31 անդամից նիստին մասնակցել է 11-ը, ևս՝ 3 հրավիրյալ անձ:

Նիստի օրակարգ՝

1) ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանի ողջույնի խոսք
2) Պետական ուսումնական հաստատությունների տարածքների նպատակային օգտագործման հարց (զեկուցող՝ Էռնեստ Ավանեսով, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան)

3) Հանրակրթության պետական նոր չափորոշչի ներդրման մեկնարկը 2-րդ, 5-րդ և 7–րդ դասարաններում (զեկուցող՝ Գայանե Մադաթյան, Ա. Բլոկի անվան թիվ 122 հիմնական դպրոց)
4) Օրակարգի հարցերի շուրջ պարզաբանումներ (ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչներ)
5) Հարց ու պատասխան
6) Ելույթներ (մինչև 3 րոպե)

ՀՀ ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդի 2023 թ.-ի **հինգերորդ** նիստը տեղի է ունեցել 29.11.2023 թ.-ին: Խորհրդի 29 անդամից նիստին մասնակցել է 16-ը, ևս՝ 4 հրավիրյալ անձ:

Նիստի օրակարգ՝

1) ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի ողջույնի խոսք
2) Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների աջակցության հարթակի ներկայացում (զեկուցող՝ ԿԳՄՍՆ հանրակրթության վարչության պետ Թամարա Սարգսյան)
3) Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսանողների աջակցության ծրագրերի ներկայացում (զեկուցող՝ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյան)
4) Հարց ու պատասխան
5) Ելույթներ (մինչև 3 րոպե)
6) ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդի անդամների ռոտացիայի կիրառում:

Օրակարգի վերջին հարցը վերաբերել է ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդի անդամների ռոտացիայի կիրառմանը: Համաձայն խորհրդի աշխատակարգի՝ երկու տարին մեկ անգամ խորհրդի անդամների 1/3-ը պետք է ռոտացիայի ենթարկվի: Ներկայում խորհուրդը բաղկացած է 29 անդամից՝ ներառյալ խորհրդի նախագահը: Ըստ այդմ՝ ռոտացիա պետք է կիրառվեր խորհրդի 9 անդամի նկատմամբ: Համաձայն խորհրդի աշխատակարգի 35-րդ կետի՝ խորհրդի կազմում անդամությունը դադարեցվում է նիստերին երեք անգամ անհարգելի բացակայելու դեպքում: ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհուրդը 2021-2023 թթ.-ի ընթացքում գումարել է 10 նիստ. 1-ը՝ 2021 թվականին, 4-ը՝ 2022-ին և 5-ը՝ 2023-ին: Հիմք ընդունելով վերոնշյալ կետը՝ խորհրդի անդամների քվեարկության արդյունքում որոշում է կայացվել ռոտացիա կիրառել այն 9 անդամի նկատմամբ, որոնց

պարագայում արձանագրվել են ամենամեծ թվով բացակայություններ, որպեսզի խորհրդի նիստերին բարեխիղճ կերպով ներկայացող և ակտիվ գործունեություն ցուցաբերող խորհրդի մյուս անդամները շարունակեն իրենց աշխատանքը խորհրդի կազմում: Ըստ այդմ՝ դադարեցվել է վերոնշյալ կազմակերպությունների և անձանց անդամությունը խորհրդի կազմում՝ Արթուր Նաջարյան՝ Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն», Գագիկ Աղաջանյան՝ «Հայաստանի ավտոմոբիլային ֆեդերացիա» ՀԿ, Ատոմ Հակոբյան՝ ՀՀ նախագահին կից հանրային խորհրդի անդամ, Արմենուհի Գասպարյան՝ «Հայա» հիմնադրամ, Օվսաննա Սարգսյանը՝ «Հասարակություն առանց բռնության» ՀԿ, Մարգարիտա Հակոբյան՝ «Օքսեջեն» երիտասարդության և կանանց իրավունքների պաշտպանության հիմադրամ, Կալիպսո Բզնունի՝ Երևանի եվրոպական ուսանողների ֆորում ասոցիացիա, Սիրանուշ Դրմոյան՝ Հումանիտար հետազոտությունների հայկական կենտրոն, Միքայել Խաչատրյան՝ «Բյուրեղավան համայնքի մարզամշակութային կենտրոն» բյուջետային հիմնարկ:

Ռոտացիայի կիրառման նպատակով 07.11.2021 թ.-ին հայտարարվել է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար: Մրցույթի արդյունքում խորհրդում ընդգրկվել է 9 նոր անդամ: Այսպիսով՝ խորհրդի կազմը բաղկացած է 29 անդամից: